ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 15-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 17.3-րդ կետի 27-րդ ենթակետի և Պալատի նախագահի 20.01.2020թ. թիվ 15-Լ որոշմամբ հաստատված Մարզերում համակարգում իրականացնելու մասին կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 9-րդ և 32-րդ կետերի պահանջներով,

նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի մարզային համակարգողի՝ 2020 թվականի մարտի 14-ին նշանակված ընտրության համար մարզի համակարգողի որևէ թեկնածու չի գրանցվել,

հաշվի առնելով Պալատի նախագահի տեղակալի առաջարկությունը և փաստաբան Վրեժ Ներկարարյանի համաձայնությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Վրեժ Ներկարարյանին (արտոնագիր № 1558) նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզային համակարգող՝ երկու տարի ժամկետով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Վրեժ Ներկարարյանին, ինչպես նաև Տավուշի մարզի փաստաբաններին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

30 ապրիլի 2020թ.
թիվ 76-Ա
ք.Երևան